ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE63-7CCD-4293-98A3 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/6643/02/26 ք. Երևան
12 Հունիսի 2026թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամայյանը, քննարկելով «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/13» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 01.06.2026թ. կազմված թիվ 4 արձանագրությամբ՝ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «ՏԵՆԴԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու հարցերը,

ՊԱՐԶԵՑ

հայցվորի ներկայացուցիչը 06.06.2026 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով այսուհետ նաև՝ Համակարգ հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարության՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/13» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 01.06.2026թ. կազմված թիվ 4 արձանագրությամբ՝ ընթացակարգի 1-ին չափաբաժնի

մասով «ՏԵՆԴԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Ներկայացված հայցադիմումը 08.06.2026 թվականին մակագրվել է դատավոր Ա. Դունամալյանին և Համակարգի միջոցով հասանելի է դարձել 09.06.2026 թվականին:

I. Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը կարծում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

II. Հաշվի առնելով, որ հայցադիմումն ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ պաշտպանության նախարարությունից պահանջել ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/13 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

III. Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.9-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑ

1. «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/13» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 01.06.2026թ. կազմված թիվ 4 արձանագրությամբ՝ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «ՏԵՆԴԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. ՀՀ պաշտպանության նախարարությունից պահանջել ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/13 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները,

3. որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, պատասխանողի կողմից ենթակա է կատարման որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում,

4. եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026 թվականի հուլիսի 23-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

5. Պատասխանողին պարզաբանել, որ վիճարկվող՝ 01.06.2026թ. կազմված թիվ 4 արձանագրությամբ՝ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «ՏԵՆԴԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշման հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև որոշման կատարման՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգի պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է

պատասխանողը: Միևնույն ժամանակ պարզաբանել, որ վիճարկվող որոշման իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող են ներկայացվել միայն ապացույցները պահանջելու վերաբերյալ որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատասխանողը հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

6. Որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանողին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:

7. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Ազատ Դունամայյան

ԿՈՒՎԵՐԱՑՎԱԾ Է
ԴԱՏԱՎՈՐ
ԴՈՒՆԱՄԱՅՅԱՆԻ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am